ՓԱՌՔ ՔԵԶ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԴՈՒ
ՎԵՐԱԾՆՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱՅՈՑ

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ

АЙРЕНИКИ ДЗАЙН
HAYRENIKY DZAYN

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ◆ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1965 Թ. ◆ 7 ՓԵՏՐՎԱՐԻ 1973 Թ., № 6 (394)

## ՆՈՐ ՀԱՍՏՈՑՆԵՐ

Սառը ճնշման նոր հաստոցի արտադրության կազմակերպումը, որն իրականացվեց անցած տարվա վերջին, մեծ ջանքեր խլեց Լենինականի հղկող հաստոցների գործարանի ինժեներա-տեխնիկական աշխատողներից ու բանվորներից։ Նախատեսված է այս տարի թողարկել մեծ պահանջարկ ունեցող այդպիսի 218 ավտոմատ հաստոց, որի արտադրության համար այժմ ստեղծվում է առանձին տեղամաս։

Զգալի չափով կընդլայնվի նաև հատուկ և ադամանդե հղկող հաստոցների արտադրությունը։

Հաստոցաշինարարները տարվա ընթացքում պատվիրատուներին կառաքեն տարբեր նշանակության 1.850 հաստոց։

## ՆԵՐԴՆՈՒՄ Է «ԱՎՏՈՄԱՏԻԿԱ»-Ն

Կիրովականի «Ավտոմատիկա» գիտահետազոտական ինստիտուտի աշխատողները Մոսկվայի, Լենինգրադի և Վոլգայի հղկանյութերի գործարաններում արմատավորված համակարգերի հիման վրա մշակել են թունելային վառարանների ավտոմատ կառավարման տիպային համակարգ, որը կներդրվի երկրի բոլոր նմանատիպ գործարաններում։

Արտադրության ընթացքի ավտոմատ կառավարման՝ Կիրովականի մակնիշը կրող համակարգերն այսօր հաջողությամբ աշխատում են Բալխաշի, Նորիլսկի լեռնամետալուրգիական, Կարագանդայի, Ուսոլիեի քիմիական կոմբինատներում և երկրի այլ խոշոր ձեռնարկություններում։

## ՄԵԾ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Անցած 1972 թվականը, որ պատմության մեջ մտավ որպես ՍՍՀՄ կազմավորման 50-ամյա հոբելյանի տարի, միաժամանակ նշանավորվեց երկրի տնտեսական, սոցիալական, քաղաքական կյանքի մեծ իրագործումներով, աշխատանքային նվաճումներով։ Սովետական մարդկանց անձնվեր ջանքերով կյանքի կոչվեցին շատ գործեր, որոնք կանխագծված էին Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարի որոշումներով։ Այդ մասին են պատմում ավարտված տարվա արդյունքների վերաբերյալ օրերս հրապարակված վիճակագրական հաղորդագրությունները։

Զգալի առաջընթաց է արել սովետական երկրի արդյունաբերությունը։ Նախորդ տարվա համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի աճը կազմել է 6,5 տոկոս։ Ընդ որում զարգացման իրական չափերը պատկերացնելու համար հարկ է նկատել, որ ամեն մի անցնող տարվա հետ աճի յուրաքանչյուր տոկոսը գնալով դառնում է ավելի մեծակշիռ։ Հենց միայն 1972 թվականին երկրի արդյունաբերական արտադրանքի ծավալը երկու անգամ ավելի էր, քան նախապատերազմյան բոլոր հնգամյակների արտադրանքը և 14 անգամ ավելի էր 1940 թվականի մակարդակից։

Բոլոր միութենական հանրապետությունները, այդ թվում և Հայկական ՍՍՀ, հաջողությամբ են կատարել տարվա համար նախատեսված առաջադրանքները։

Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման 1972 թվականի պետական պլանի կատարման արդյունքների վերաբերյալ Հայկական ՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը ուշագրավ տվյալներ է պարունակում հանրապետության նոր վերընթացի մասին, որ ձեռք է բերվել տնտեսության, գիտության ու մշակույթի ասպարեզում։

Սպառման և կուտակման համար օգտագործված ազգային եկամուտը 1972-ին աճել է ավելի քան 100 միլիոն ռուբլով և կազմել երեք միլիարդ ռուբլի։ Ընդ որում ազգային եկամտի մոտ երեք քառորդը օգտագործվել է սպառման համար, իսկ մնացածը՝ սոցիալիստական արտադրության ընդլայնման և համապետական այլ կարիքների համար։

Հանրապետությունում արդյունաբերական արտադրության աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 4 տոկոս։ Արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը աճել է 1,8 տոկոսով։

Արտադրանքի առավել աճ է տեղի ունեցել կուլտուր-կենցաղային և տնտեսական գործածության ապրանքների արտադրության, մեքենաշինության և մետաղամշակման, շինանյութերի արդյունաբերության ճյուղերի գծով։

1972 թվականին ստեղծվել են մոտ 60 անուն նոր նմուշի մեքենաներ, ապարատներ և սարքեր, սկսվել է 57 անուն նոր տեսակի արդյունաբերական արտադրանքների սերիական թողարկումը։

Արտադրության մեքենայացման ու ինտենսիֆիկացման, տեխնոլոգիական պրոցեսների բարելավման, սարքավորումների արդիականացման և այլ միջոցառումների շնորհիվ մեծացել են գործող ձեռնարկու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



Ինստիտուտի ֆիզիկա-քիմիական լաբորատորիայի էլեկտրոնային մանրադիտակի խմբի ղեկավար Զ. Մուրադյանը աշխատանքի պահին։

## ԱՌԱՋԱՐԿՈՂ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Երևանի պոլիմերների համամիութենական գիտահետազոտական նախագծային ինստիտուտի դիրեկտոր Նորայր Կարապետյանի ցույց տված հեռագրերը կրում են ամենատարբեր հասցեներ.

— Յուրաքանչյուր արտադրատեսակ, որ մշակել են մեր մասնագետները, արտադրության յուրացումից առաջ արդեն բազմաթիվ պատվիրատուներ ունի Սովետական Միության ձեռնարկություններում։ Այս հեռագրերը այն նոր արտադրանքի պատվերներն են, որ մենք թողարկելու ենք գործարկման ընթացքում գտնվող մեր փորձարարական գործարանում։ Այստեղ մենք կիրառում ենք պոլիմերի՝ լատեքսից նոր տիպի անջատման (սառեցման միջոցով), չորացման, ծրարման և այլ գործողությունների նոր եղանակներ։ Այդ գործընթացները կիրականացվեն նորագույն տեխնիկայի և սարքավորումների շնորհիվ։

Ինստիտուտը, որ գտնվում է Կիրովի անվան քիմիական կոմբինատի տարածքում և ամենասերտ շփման մեջ է արտադրության հետ, լայնորեն հայտնի է Սովետական Միությունում։ Նրա առաջարկած արտադրատեսակները որակով չեն զիջում արտասահմանյան լավագույն

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



Քիմիական ռեագենտների և նյութերի արտադրության փորձնական բաժանմունքում։

